

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱԶՅԱ ԱՃԱՌՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՈՎՀԱՆՆԻՍՑԱՆ ԱԼՎԻՆԱ ՊՈՂՈՄԻ

**ՀՐԵԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԿԱՅԱՑՈՒՄՆ
ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 9-13-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ԱՐԱԲԱՀՐԵԱԿԱՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

**Ժ.02.06 «Ասիայի հին և նոր լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Ս.Բ. Կարաբեկյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր **Ա. Ժորդանիա**

քանասիրական գիտությունների թեկնածու **Ա. Ա. Առաքելյան**

Առաջատար կազմակերպություն՝ Երուսաղեմի երբայական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թվականի մայիսի 25-ին, ժամը՝ 15:00-ին, ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՂ-ի՝ Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում

Հասցեն՝ 0015, ք. Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 20-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, քանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ն.Մ.Միմոնյան**

ԱՏԵՆԱՌՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքում ներկայացվող ընդհանուր հարցադրումները

Լեզվի ուսումնասիրության առաջին փորձերն անմիջականորեն կապվում են տվյալ լեզվով գրավոր հուշարձանների ուսումնասիրության, լեզվական իմացության փոխանցման և պահպանման անհրաժեշտության հետ: Լեզվի մասին պարզագույն պատկերացումներից, փոփոխությունների գիտակցումից մինչև գիտականորեն հիմնավորված հետազոտությունների նախաձեռնումը կարող է բավականին երկարատև լինել՝ պայմանավորված լեզվակիր հասարակության պատմամշակութային համատեքստով, ներլեզվական և արտալեզվական գործոններով:

Հրեական քերականական ուսմունքը ձևավորման և կայացման տեսանկյունից ուսումնասիրության հետաքրքիր նյութ է տրամադրում, քանի որ գրավոր հուշարձանի՝ Սուրբ Գրքի ուսումնասիրությունից մինչև առաջին քերականական երկերի ստեղծումը ընդգրկում է մոտ տասնադարյա ժամանակաշրջան:

Եբրայերենի նկարագրության առաջին փորձերը կատարվում են կրոնամեկնության շրջանակներում՝ սկսած դեռևս մ.թ.ա 2-րդ դարից, իսկ Սուրբ գրքի ընթերցման, փոխանցման ու գրառման գործընթացն ուղեկցվում է լեզվական տվյալների կուտակմամբ: Այս ներլեզվական գործոններին գումարվում է բազմալեզու մշակութային միջավայրը, որն էլ պայմանավորում է ինչպես լեզվի գործառության աստիճանը, այնպես էլ դրա ուսումնասիրության անհրաժեշտությունն ու ուղղությունները:

9-րդ դարի վերջում միայն արտաքին, մասնավորապես՝ արաբական քերականական մտքի ազդեցությամբ հրեական միջավայրում լեզվի ուսումնասիրության փորձերը ստանում են գիտական ձևակերպումներ: Եվ այս առնչությամբ գիտական մտքի շարունակականությունը բացահայտելու և

ընթացքին հետևելու համար մի շարք հարցադրումներ և խնդիրներ են առաջանում, որոնք տրվում են ստորև:

1. Ուսումնասիրելով եբրայերենի ուսումնասիրության ձևավորման և կայացման ընթացքը՝ անհրաժեշտ է պարզել, թե ինչով են պայմանավորված այսքան երկար ընդմիջումը և հենց արաբական ավանդույթի ազդեցությամբ քերականական ուսումնասիրությունների ձեռնարկումը:
2. Ներկայացնելով ուսումնասիրվող տարածաշրջանի լեզվական իրադրությունը՝ վերականգնել լեզվամշակութային առնչությունների պատկերը՝ քերականական գիտելիքի համատեքստում:
3. Ընդունելով արաբական լեզվաբանական ավանդույթի ազդեցությունը՝ պետք է հնարավորինս արժևորել կրոնամեկնական գրականության շրջանակներում կատարված ուսումնասիրությունները՝ փորձելով գործնական նկարագրություններից վերհանել տեսական ընդհանրացումները:
4. Հաշվի առնելով քերականական գիտության մեջ արաբական մետալեզվի գերակայությունը՝ արաբական աղբյուրների համադրական վերլուծությամբ սահմանազատել հրեա հեղինակների ինքնուրույն ձևակերպումներն ու տեսական դրույթները:

Սուրբ գրքի ուսումնասիրությամբ պայմանավորված՝ կրոնամեկնական գրականության, ուսումնասիրվող դարաշրջանի հանրալեզվաբանական իրադրության, այլ ավանդույթների հետ առնչության քննությունը հնարավորություն է տալիս վերականգնելու լեզվի մասին գիտության կայացման ընթացքը:

Աշխատանքում ուսումնասիրվող խնդիրների արդիականությունը

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ միջնադարյան հրեական քերականական ուսմունքի

եզրութաբանական և հասկացական համակարգի ուսումնասիրության արդյունքները կարող են հիմնարար նշանակություն ունենալ ինչպես արդի եբրայերենի լեզվաբանական, այնպես էլ սեմական համեմատական հետազոտություններում: Բացի այդ՝ աղբյուրագիտական նյութի ընդգրկմամբ կատարված վերլուծությունները չափազանց կարևոր են միջնադարյան բանասիրական գիտության արժևորման տեսանկյունից: Աշխատանքի շրջանակներում միջնադարյան արաբահրեական մշակութային առնչությունների ուսումնասիրությունը կարող է կարևոր նախադեպային հիմք ապահովել ժամանակակից փուլում մշակութային երկխոսության հնարավորությունները գնահատելու համար:

Ատենախոսության նպատակը

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝

ա) ներկայացնել հրեական քերականական ուսմունքի պատմությունը ինչպես ներքին՝ հրեական բանասիրական գիտահամակարգի, այնպես էլ արտաքին, մասնավորապես արաբական լեզվաբանական ավանդույթի համատեքստում,

բ) Աղբյուրագիտական նյութի ներգրավմամբ բացահայտել կրոնամեկնական և քերականական ուսումնասիրությունների ընդհանրությունները՝ համակարգելով ստացված արդյունքները,

գ) Լեզվաբանական մետալեզվի ուսումնասիրության միջոցով գնահատել հրեական քերականական ուսմունքի ինքնուրույնության և հետազոտական արդյունավետության աստիճանը:

Գիտական նորույթը

Աշխատանքում առաջին անգամ փորձ է արվում ներկայացնելու հրեական քերականական ավանդույթի պատմությունը՝ ըստ ավանդույթը նկարագրող մետալեզվի: Սուրբ գրքի տեքստի ձայնանշավորման և փոխանցման ավանդույթի պատմության ներկայացմամբ կարևորվում է

գործնական տվյալների հենքի ստեղծումը, որն էլ հետագայում դառնում է քերականական գիտության նյութական հիմք:

Կրոնամեկնական գրականության աղբյուրի քննությամբ վերականգնվում է կրոնամեկնության և քերականական ուսմունքի միջև գոյություն ունեցող կապը: Ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվում են նաև միջմշակութային առնչությունները՝ հենց լեզվաբանական գիտելիքի փոխանցման առումով:

Աշխատանքի մեթոդաբանությունը

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են գիտական հետազոտության իմացաբանական հիմքերը, պատմաահամեմատական, պատմավերլուծական քննության, միջգիտակարգային հետազոտության մեթոդները, որոնք ապահովում են ստենախոսության շրջանակներում ավարտուն ուսումնասիրություն՝ հետազոտական համապատասխան ելքերով:

Աշխատանքի ժամանակագրական սահմանները

Աշխատանքի ժամանակագրական շրջանակներն ընդգրկում են հիմնականում 9-13-րդ դարերը՝ հրեական քերականական ուսմունքի կայացման և զարգացման շրջանը: Բանասիրական գիտելիքի ուսումնասիրության և պատմամշակութային համատեքստի վերականգնման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ նկարագրվում են նաև քննվող ժամանակաշրջանին նախորդող դարերը, ինչպես նաև ընդհանուր գծերով ներկայացվում են քերականական ուսմունքի զարգացման միտումները հետագա դարերում:

Աշխատանքի կիրառական նշանակությունը

Ատենախոսության հիմնական դրույթներն ու հարցադրումները կարող են հիմք հանդիսանալ լեզվաբանական պատմագրության, աղբյուրագիտական, միջմշակութային ուսումնասիրությունների համար, ինչպես նաև օգտագործվել բարձրագույն ուսումնական

հաստատություններում սեմալեզու տարածաշրջանի լեզվաբանական ուսմունքի պատմությանն առնչվող դասընթացներում:

Աշխատանքի կառուցվածքը

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ նկարագրվում են ստենախոսության հիմնական հարցադրումները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը, պարզաբանվում են թեմայի արդիականությունը, հետազոտական խնդիրներն ու նպատակը, տրվում է գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլխում՝ «Միջմշակութային առնչությունները հրեական միջավայրում 1-9-րդ. դարերում» նկարագրվում է քննվող ժամանակաշրջանում հանրալեզվաբանական իրադրությունը, ներկայացվում են միջլեզվային առնչությունները, լեզվաբանական մետալեզվի ձևավորումը արաբահրեական համակեցության պայմաններում:

Հրեաներն իրենց բազմադարյան պատմության ընթացքում առանձնացել են երկլեզվությամբ ու բազմալեզվությամբ, և նման իրադրություններում գործածվող լեզուների աստիճանակարգման բարձրագույն սանդղակում եղել է Սուրբ Գրքի լեզուն՝ եբրայերենը:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում լեզվական իրադրության ներկայացման համար տրվում են հանրալեզվաբանական այնպիսի հասկացությունների պարզաբանումը, ինչպիսիք են երկլեզվությունը, բազմալեզվությունը և այլն:

Հայտնվելով լեզվամշակութային տարբեր միջավայրերում՝ հրեաները մի կողմից այս կամ այն չափով ինտեգրվում էին համապատասխան կրոնամշակութային համակարգում, իսկ մյուս կողմից էլ, ձգտելով ինքնապահպանման և խուսափելով վերջնական ուժացումից, փորձում էին վերարժևորել սեփական լեզուն՝ հարմարեցնելով այն ժամանակի պահանջներին: Այդ շարունակական գործընթացի արդյունքն են

հրեական լեզուները՝ հրեա-արամեերենը, իդիշը, լադինոն, հրեա-արաբերենը, հրեա-պարսկերենը, հրեա-իտալերենը, հրեա-պրովանսալերենը և այլն, որոնք լեզվական առնչությունների և փոխազդեցությունների հետաքրքիր սինթեզ են: Վերոնշյալ լեզուներն անշուշտ տարբերվում են միմյանցից իրենց բառապաշարային և քերականական համակարգերով, լեզվական գործառույթով, դրանցով ստեղծված գրական հուշարձանների բնույթով, սակայն, այնուամենայնիվ, հետազոտողները դրանք միավորում են մեկ՝ հրեական անվամբ՝ հիմնվելով մի շարք սկզբունքների վրա:

Եբրայերենն ու արամեերենը: Իր զարգացման գրեթե բոլոր փուլերում արամեերենը սերտորեն կապված է հրեաների պատմության և հրեական մշակույթի հետ:

Մ.թ.ա. 6-4-րդ դդ. Բաբելոնի Մահիկի երկրների բնակչությունը ակնհայտ էր լեզվական իրավիճակի գլոբալ փոփոխությունների. արամեերենը, ձեռք բերելով ազգամիջյան հաղորդակցության լեզվի կարգավիճակ, վերածվեց այսպես կոչված *lingua franca-ի*¹: Այս փոփոխություններից անմասն չմնացին նաև հրեաները, որոնց շրջանում արդեն սկսած մ.թ.ա 6-րդ դարից, այսինքն՝ Բաբելոնյան գերությունից հետո ընկած ժամանակահատվածում, եբրայերենը՝ որպես առօրյա խոսակցական լեզու, սկսեց դուրս մղվել արամեերենի կողմից սկզբում Պաղեստինի սահմաններից դուրս, ապա նաև Պաղեստինի տարածքում՝ արդեն մ.թ. առաջին դարերում արամեերենը վերածվել էր հրեաների հիմնական խոսակցական լեզվի: Այս ընթացքում եբրայերենը շարունակում էր մնալ ծիսական և գրական լեզու այն դեպքում, երբ տնտեսական և ռազմական փաստաթղթերը գրվում էին արամեերենով: Բացի այդ՝ եբրայերենը կրում էր արամեերենի մեծ ազդեցությունը, և արամեերենն աստիճանաբար

¹ Lingua franca - Լինգվա ֆրանկան (հաճախ անվանվում է նաև աշխատանքային լեզու կամ ընդհանուր լեզու) այն լեզուն է, որը կիրառվում է ընդհանուր լեզու չունեցող մարդկանց միջև հաղորդակցության համար, մասնավորապես երբ այն երրորդ, երկու լեզվակիրների՝ մայրենի լեզուներից տարբեր լեզու է:

ներթափանցում էր նաև ծիսական ոլորտ. արդեն Հին կտակարանի ավելի ուշ գլուխներից *Եզրասի* ու *Ղանիելի* գրքերը գրված են արամեերենով: Արամեերենով են գրված նաև մ.թ.ա. 3-2-րդ դարերով թվագրվող այսպես կոչված «Մենյալ ծովի գլանների» կամ «Կուսրանի ձեռագրերի» մի մասը, որոնք ժամանակին պատկանել են հրեական «Լույսի որդիներ» համայնքին:

Եբրայերենն ու արաբերենը: 8-10-րդ դարերը արաբերենի պատմության մեջ բնութագրվում են միասնականացմամբ, ստանդարտացմամբ, գրական ժանրերի և ձևերի վերջնական ձևավորմամբ ու ամրագրմամբ, դասական պոեզիայի, գեղարվեստական և գիտական արձակի զարգացմամբ: Արաբերենը դառնում է Արաբական խալիֆայության գրականության և գիտության հիմնական լեզու:

Մ.թ.ա. 1-ին հազարամյակի կեսերից այս տարածաշրջանում ազգամիջյան հաղորդակցության լեզու էր դարձել արամեերենը, և ըստ էության այն, ինչ տեղի ունեցավ 7-9-րդ դդ. արաբերենի հետ, միայն կրկնում էր արամեերենի պատմությունը դրանից տասներկու դար առաջ: Եբրայերենի և արաբերենի միջև գործառնությունների բաժանումը գրեթե կրկնում էր եբրայերենի և արամեերենի միջև դերային բաշխումը: Արաբերենի՝ արամեերենին փոխարինման պատճառներից մեկն այն էր, որ արաբերենն աստիճանաբար սկսեց կատարել այն գործառնությունները, որոնք ժամանակին կատարում էր արամեերենը: Արաբերենի յուրացումը հրեաների կողմից հանգեցրեց արաբական մտածելակերպի և գրական ձևերի, ինչպես նաև իսլամի կրոնական հասկացությունների ընդունման: Արաբերենն աստիճանաբար սկսում է կիրառվել գրական գործունեության բոլոր տեսակներում, ոչ միայն աշխարհիկ կամ գիտական նպատակներով, այլ նաև մեծ չափով Թորայի և ռաբբիական տրակտատների մեկնաբանման ու հրեական օրենքի և ծիսակարգի թարգմանության և քննարկման համար:

Արաբերենի դերի հստակ նկարագրման և մանրամասն վերլուծության համար աշխատանքում ներկայացվում են միջմշակութային

առնչությունների ոլորտները, և հրեա-արաբական համակեցությունը դիտարկվում է տարբեր առումներով՝ *իրավական, սոցիալ-տնտեսական, գիտամշակութային, կրոնական* և, իհարկե, *լեզվական*, որոնք սերտորեն փոխկապակցված են:

Երկրորդ գլխում վերնագրված «Հրեական քերականական ուսմունքի ձևավորումը: Մասորա և կրոնամեկնություն», ներկայացվում են լեզվի ուսումնասիրության նախաքերականական փորձերը Մասորայի՝ Հին կտակարանի տեքստի քերականական և քննադատական գրառումների շրջանակներում: Այստեղ նկարագրվում է նաև կրոնամեկնության ու լեզվի ուսումնասիրության հարցը՝ մասնավորապես տեքստի պարզ ընկալման ուղղության ձևավորման շրջանակներում, փորձ է արվում վերականգնելու այն պակասող օղակը, որը գոյություն ունի տեքստի վաղ ուսումնասիրության և ուշ ձևավորված քերականական ուսմունքի միջև՝ միջնադարյան մեկնաբան և քերականագետ Աբրահամ իբն Էզրայի՝ Հին Կտակարանի «Ելից» գրքի մեկնաբանությունների վերլուծության միջոցով:

Մասորան Թանախի տեքստի վերաբերյալ քերականական և քննադատական գրառումների, ցուցումների ամբողջությունն է, որի նպատակը այդ տեքստի պահպանումն էր աղավաղումներից և նրա ամրագրումը բոլոր ժամանակների համար²:

Այս գործընթացն սկսվել է 6-րդ դարում Տիբերիայի ակադեմիայի³ գիտնականների կողմից, այնուհետև տարածվել նաև Բաբելոնում և այլ հրեական համայնքներում: Դարերով բանավոր կերպով փոխանցվելով որպես սուրբգրքյան տեքստի արտասանական կանոնները պարզաբանող և մեկնաբանող ավանդույթ՝ Մասորան սկսեց գրավոր կերպով գրանցվել տեքստին կից և գործառվել իր նեղ իմաստով՝ մատնանշելով տեքստի

² *Geden S. A., Kilgour R.*, Introduction to the Ginsburg Edition of the Hebrew Old Testament, British and Foreign Bible Society, 1928, էջ 48

³ Կրոնական տեքստերի ուսումնասիրության կենտրոն, որ հիմնվել է 3-րդ դարի կեսերին և գործել է մինչև 9-րդ դարի վերջերը

վերաբերյալ արված տարբեր բնույթի գրառումները, նշումները, նշանային համակարգը: Մասորականների գործունեությունը՝ տեքստի ամրագրումը, եզակի, անկանոն ձևերի, յուրաքանչյուր գրքում բառերի, տառերի բավական լուրջ հաշվարկը, ուղղված էր պահպանելու Թանախի տեքստի ամբողջականությունը:

Մասորան, պատկերավոր ասած, «քերականության օրորոցն» էր: Մասորականները ճշտում էին սուրբգրքյան որոշակի բառերի ձևը, գրանցում տեքստում նկատվող առանձնահատկությունները, շեղումները, ուղղում անճշտությունները, ամրագրում կանոններ ընթերցանության և արտասանության համար: Սակայն նրանց աշխատանքները քերականական կարգերի սահմանումներ չեն պարունակում, ոչ էլ լեզվական ձևերի ուսումնասիրություն են ներկայացնում: Մասորական ձայնավորումը, շեշտադրումը և ընդհանրապես նրանց բոլոր կարգի նշումներն ու գրառումները սուրբգրային կողեքսների լուսանցքներում լեզվական հսկայական ուսումնասիրության նյութ մատակարարեցին արդեն նպատակաուղղված կերպով լեզվով և նրա ուսումնասիրությամբ ու համակարգմամբ զբաղվող հրեա առաջին քերականներին:

Կրոնամեկնություն և քերականություն: Հին կտակարանյան տեքստերի ուսումնասիրության և մեկնաբանության առաջին փորձերն արտացոլված են արդեն իսկ սուրբ գրային տեքստերում: Այդ փորձերն ամբողջացվեցին Բանավոր օրենքի բոլոր բաղադրիչներում՝ Միդրաշ, Թալմուդ, Միշնա:

Տեքստի վերլուծության որոշ նշաններ՝ բառերի ստուգաբանության կամ բացատրության տեսքով, առկա են հենց սուրբ տեքստում, հատկապես Գիրք Ծննդոցում՝ այս կամ այն տեղանվան կամ անձնանվան հետ կապված: Այսպես օրինակ, Բսահակ անունը եբրայերեն՝ - ԴՅՅ՝ - *yitskhak*, «ծիծաղեց», քանի որ Սառան, երբ լսեց, որ ինքը պետք է ծննդաբերի (Գիրք Ծննդոց, 21:3-6), ծիծաղեց, կամ Բեթել (եբր. ԵՁ ԵԿՄՍստծո տուն) տեղանունը (Գիրք

Ծննդոց, 28:19), որը տրվեց Հակոբի կողմից այն վայրին, որտեղ նա երագում տեսել էր Աստծո հրեշտակին: Նման օրինակները վկայում են տեքստային միավորների լեզվաբանական վերլուծության նկատմամբ հետաքրքրության մասին: Կրոնամեկնական գրականության մեջ ևս բազմաթիվ են օրինակները, երբ տեքստի այս կամ այն անհասկանալի հատվածի բացատրության համար կիրառում էին տեքստաբանական վերլուծության տարբեր եղանակներ:

Տեքստի մեկնության ժամանակ անխուսափելի է լեզվական միջոցների կիրառումը, սակայն հենց հրեական քերականագիտության զարգացման փուլում է, որ այս կապը բացահայտվում և վերաիմաստավորվում է՝ շնորհիվ տեքստի մեկնաբանության պարզ կողմնակիցների՝ պաշտանների և քերականագետ-մեկնաբանների գործունեության 11-13-րդ դարերում:

Այս ժամանակաընթացքում Իսպանիայում իր գործունեությունն է ծավալում քերականագետների մի սերունդ. նրանք համադրում են կրոնամեկնությունը և քերականությունը նորովի՝ մեկնական հատվածները ուղեկցելով քերականական բացատրություններով, իսկ քերականական սահմանումներն ու ընդհանրացումները հիմնավորելով սուրբգրքյան և կրոնամեկնական գրականությունից վերցված օրինակներով:

Այս առումով ուսումնասիրության բավականին հետաքրքիր նյութ են ընդգրկում Իսպանիայում հրեական ոսկեդարի ականավոր ներկայացուցչի՝ Աբրահամ իբն Էզրայի (1089–1164թթ.) կրոնականմեկնական աշխատանքները, որոնց մի մասի հիման վրա էլ աշխատանքում ներկայացվում են կրոնամեկնության և քերականագիտության զուգահեռները՝ համապատասխան տեքստային օրինակներով:

Հրեական քերականական գիտության գլխավոր աղբյուրը հենց Սուրբ Գիրքն էր և նրա լեզուն՝ Աստվածաշնչյան եբրայերենը, սակայն միանգամայն հասկանալի պատճառներով քերականագիտությունը որպես այդպիսին կոչվելու համար պետք է դուրս գար կրոնամեկնության

շրջանակներից, տեսականացներ քերականական օրինաչափությունները, կանոնները դարձներ հիմնադրույթներ, նույնիսկ ավելին, չսահմանափակվեր եբրայերենի ուսումնասիրությամբ, այլ ներգրավելով այլ լեզվական նյութ՝ մասնավորապես արաբական և արամեական, սկիզբ դներ համեմատական ուսումնասիրություններին⁴:

Ելից գրքի մեկնաբանության և քերականական կանոնների, բացատրությունների ուսումնասիրությունը մի կողմից արտացոլում է կրոնամեկնական մեթոդների զարգացման ուղիները 11-12-րդ դարում, այն է՝ տեքստի պարզագույն ընկալման անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից՝ հստակեցնում են կապը կրոնամեկնության և քերականագիտության միջև՝ ուսումնասիրության հարուստ նյութ տրամադրելով քերականական հետազոտությունների համար:

Երրորդ գլխում՝ վերնագրված «Արաբական ավանդույթի ազդեցությունը հրեական քերականական ուսմունքի վրա. Յոնա իբն Ջանահ», ուրվագծվում են քերականական ուսմունքի զարգացման հիմնական ուղղությունները, ներկայացնում են հրեական քերականական ուսմունքի եզրութաբանական համակարգի առանձնահատկությունները՝ արաբական ավանդույթի ազդեցությամբ, և 11-րդ դարի ականավոր քերականագետ Իբն Ջանահի (990 – 1050 թթ.) «Sefer Harikma» երկի հիմնադրույթները:

Հիմնվելով քերականական մտքի ձևավորման և զարգացման ընդհանուր միտումների վրա՝ հրեական քերականական ավանդույթը կարելի է պայմանականորեն բաժանել երկու փուլի՝ 9-11-րդ դ. կեսեր, երբ ստեղծվում են գործնական քերականության առաջին երկերը և կատարվում տեսական ընդհանրացումներ, ընդ որում այս փուլի հիմնական լեզվաբանական

⁴ Մանրամասն տե՛ս Charlap L., R. Abraham Ibn-ezra's viewpoint regarding the Hebrew language and the biblical text in the context of medieval environment, *Folia Linguistica: Acta Societatis Linguisticae Europaeae*, Vol 26(1-2), 2005, 1-11.

մետալեզուն արաբերեն է, և 11-րդ դարի կեսերից մինչև 13-րդ դար, որը կարելի է անվանել լեզվաբանական գիտության կողիֆիկացիայի փուլ, երբ հիմնականում ամրագրվում և ամփոփվում են նախորդ քերականական ձեռքբերումները, քերականական երկերը թարգմանվում են եբրայերեն կամ էլ գրվում են եբրայերենով:

Համապատասխան ենթազրույթներում ժամանակագրորեն ներկայացվում են հրեա քերականագետներ Սաադիա Գաունի (882-942թթ.), Յեհուդա իբն Կուրայշի (9-րդ դ. վերջ-10-րդ դարի կեսեր), Մենախեմ բեն Սարուկի (920-970 թթ.), Դավիթ բեն Աբրահամ ալ-Ֆասիի (10-րդ դարի երկրորդ կես), Յեհուդա իբն Հայյուջի (950թ. Մարոկկո -11-րդ դ. սկիզբ) և ապա երկրորդ շրջանի քերականագետներ Աբու ալ-Ֆարաջ Հարունի (11-րդ դ.), Յոսեֆ Գիմսիի (1105-1170), Մոշե Գիմսիի (1127-1190), Սաադիա իբն Դանանի (15-րդ դ. 2-րդ կես-1493 թ.), Յոսեֆ Կասպիի (1279-1340) և այլոց գործունեությունն ու հիմնական քերականական երկերը:

Լեզվաբանական գիտության ձևավորումն ու կայացումը, հասկացական ապարատի զարգացումը և ուսումնասիրության մեթոդների մշակումն անխուսափելիորեն ուղեկցվում են եզրութաբանական բառապաշարի հաստատմամբ ու համալրմամբ: Անդրադառնալով մեր ուսումնասիրության առարկայի՝ հրեական քերականական ուսմունքի եզրութաբանական համակարգի առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ այս հարցի ուսումնասիրությունը ոչ միայն կարևորվում է եզրութաբանության նկարագրության անհրաժեշտությամբ, այլև հնարավորություն է տալիս հետևելու քերականական ուսմունքի ձևավորման ու կայացման ընթացքին:

Որպես հիմք ընդունելով քերականական ուսմունքի ձևավորման՝ նախորդ գրույթներում ներկայացված և վերլուծված հանգամանքները՝ հստակորեն կարելի է առանձնացնել եզրութների մի քանի շերտեր՝

համապատասխան ժամանակաշրջանի կամ մետալեզվի հետքային ազդեցությամբ պայմանավորված:

Առաջին շրջանը կարելի է պայմանականորեն անվանել նախաքերականագիտական եզրույթների ու հասկացությունների շրջան:

Այս փուլում թեև ներքին բաժանմամբ տարբերակվում են բուն կրոնական մեկնաբանների և մատրականների ամրագրած եզրույթները, սակայն ոչ միշտ է հնարավոր ակհայտորեն սահմանազատել դրանց կիրառման ոլորտները, քանի որ ի վերջո թե՛ կրոնամեկնության և թե՛ Մատրայի ուսումնասիրության կենտրոնում Թանսխան էր:

Եզրույթների մյուս խումբը արաբական մետալեզվի ազդեցությամբ ստեղծված համակարգն է, սկզբում՝ արաբերեն, իսկ հետո նաև եբրայերեն համարժեք տարբերակներով:

Աշխատանքի վերջին հատվածը նվիրված է Իբն Ջանահի «Սեֆեր Հառիկմա» երկին, որը քերականական դրույթների յուրահատուկ ամփոփում է՝ արաբ, ինչպես նաև նախորդ հրեա հեղինակների փորձի վրա հիմնված: Այն գրվել է մոտավորապես 1050 թ. այդ ժամանակաշրջանի լեզվաբանական մետալեզվով՝ հրեա-արաբերենով⁵, թեև ամբողջական տեսքով պահպանվել է եբրայերեն թարգմանությունը՝ կատարված Հուդա իբն Տիբբոնի կողմից 1171 թ.⁶:

Տրվում է երկի առաջին գլխի թարգմանությունը՝ մեկնաբանություններով և արաբական քերականական ավանդույթում առկա գուգահեռների վերհանմամբ:

Ամփոփելով Իբն Ջանահի «Սեֆեր Հառիկմա» քերականական երկի առաջին գլխի վերլուծությունը և մասնավորապես անդրադառնալով արաբական լեզվաբանական ավանդույթի հետ անմիջական կապին՝ հարկ

⁵ Ibn Janah, Abu l-Walid Marwan, Kitab al-Luma', J. Derenbourg, Editor, Paris, Biblioteque d'Ecole des Hautes Etudes, Volume 81, 1889

⁶ Jonah ibn Janah, *Sefer ha-Rikmah*, Translated by R. Ibn Tibbon, ed. by M. Wilensky, Jerusalem, Hebrew language Academy, 1, 1964

ենք համարում նշել, որ բազմաթիվ զուգահեռների և նույնիսկ պատճենումների առկայությունը վկայում են միջմշակութային հաղորդակցության մասին և չեն նսեմացնում հրեա քերականագետի կատարած աշխատանքը:

Եզրակացության մեջ ամփոփվում են ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտության արդյունքները.

1. Բազմալեզու մշակութային միջավայրում եբրայերենը դեռևս երկրորդ դարում կորցրել էր իր հաղորդակցական գործառույթը և պահպանվում ու փոխանցվում էր սերունդներին ծիսական-կրոնական ստեղծագործությունների միջոցով: Արձագանքելով ժամանակի լեզվական իրադրությանը՝ Թանախի լեզուն համագոյակցում է այլ լեզուների՝ արամեերենի, հունարենի, արաբերենի և այլ լեզուների հետ: Տարբեր ժամանակաշրջանում այս լեզվական ճգնաժամը հաղթահարվում է տարբեր ուղիներով: Այսպես, 4-5-րդ դարերում եբրայերենի խոսակցական գործառույթի բացակայության պայմաններում Թորայի տարընթերցումներից խուսափելու համար մատրականները նախաձեռնեցին Թանախի ճշգրտումն ու ձայնադրումը՝ ամփոփելով իրենց գրառումները մատրական ժողովածուներում: Այս գործընթացն ուղեկցվեց նաև տեքստի քերականական վերլուծությամբ՝ առանց համակարգային նկարագրության:

2. Ռաբբիական գրականությունը, այն է՝ Թանախի կրոնամեկնական վերլուծությունը, բացի զուտ կրոնական բացատրությունից, պարունակում էր նաև քերականական դիտարկումներ, որոնք որոշ դեպքերում, մասնավորապես Աբրահամ իբն Էզրայի երկերում, վերաճում են քերականական սահմանումների և կանոնների՝ այսպիսով իսկ հիմք հանդիսանալով քերականական ուսմունքի ձևավորման համար:

3. 7-րդ դարի կեսերից մերձավորարևելյան տարածաշրջանում ձևավորվեց նոր արաբամուսուլմանական կրոնամշակութային համակարգ, որը միավորում էր այստեղ բնակվող բազմաթիվ ազգերի, այդ թվում հրեաներին: Այս բազմամշակութային համատեքստում արաբերենը դարձավ միավորող գործոն միջմշակութային առնչություններում և գիտական մետալեգու խալիֆայության բոլոր գիտական շրջանակներում: Արաբերենի այս նշանակալի ազդեցությունը ծնունդ տվեց հրեաարաբական հարուստ և բազմաժանր գրականությանը՝ փիլիսոփայական, բժշկագիտական, աստղագիտական և քերականական բազմահատոր երկերով:

4. Կրոնամեկնության քերականական վերլուծությունների և մատրական գրառումների հիման վրա արաբական քերականական ավանդույթի ազդեցությամբ 9-10 դարերում հրեական միջավայրում ձևավորվում է եբրայական քերականական ուսմունքը, որն իր զարգացման գագաթնակետին է հասնում Իսպանիայում 10-11-րդ դարերում: Լեզվի ուսումնասիրման տեսականացումը և համակարգումը ներկայացված է Յոնա իբն Ջանահի քերականագիտական երկերում, մասնավորապես «Սեֆեր Հատիկմա» գրքում: Ի սկզբանե գրվելով արաբերեն, ապա 14-րդ դարում թարգմանվելով եբրայերենի Իբն Տիբբոնի կողմից՝ այս երկը կրում է արաբերենի գերակշիռ ազդեցությունը ինչպես քերականական ձևակերպումներում և եզրույթներում, այնպես էլ քերականական երևույթների նկարագրության մեջ՝ երբեմն հասնելով արհեստական պատճենումների:

**Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են
հետևյալ գիտական հրատարակումներում**

1. Արաբական լեզվաբանական ավանդույթի ազդեցությունը հրեական միջնադարյան քերականական աշխատությունների վրա «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր Ա, Երևան, 2006, էջ 123-136:

2. Терминологический аппарат средневековой еврейской грамматической традиции, «Orientalia», պրակ 9, Երևան, 2010, էջ 123-129:

3. Grammatical Definitions in Abraham Ibn Ezra's Commentaries on Exodus, "Language, Society and Communication", N1, ԵՊԼՀ հրատարակչություն, Երևան, 2010, էջ 55-59:

4. Արաբական մետալեզվի ազդեցությունը Յոնահ իբն Ջանահի «Սեֆեռ Հադիկմա» տրակտատի վրա, «Արաբագիտական ուսումնասիրություններ», հատոր Դ, Երևան, 2010, էջ 96-99:

ОВАННИСЯН АЛЬВИНА ПОГОСОВНА

СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ЕВРЕЙСКОГО ГРАММАТИЧЕСКОГО УЧЕНИЯ В IX-XIII ВВ. В КОНТЕКСТЕ АРАБО- ЕВРЕЙСКИХ ОТНОШЕНИЙ

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.06 «Древние и новые языки Азии».

Защита состоится 25-ого мая 2015 г., в 15:00 часов, на заседании специализированного совета 019 ВАК по лингвистике, действующего при Институте языка им. Г. Ачаряна НАН РА, по адресу: 0015, г. Ереван, ул. Григор Лусаворич, 15.

РЕЗЮМЕ

Диссертация посвящена формированию и развитию еврейской грамматической науки в контексте арабо-еврейских взаимоотношений в IX-XIII вв.

История еврейского грамматического учения является интересным материалом для изучения, так как наблюдается длинный промежуток - почти десять веков, между изучением священной книги и формированием грамматической теории.

Первые попытки описания языка иврит были предприняты в экзегетической литературе, которая восходит ко II веку до нашей эры, и процесс чтения и передачи Писания сопровождается накоплением языковых данных. Эти внутренние языковые факторы соединяются с внешними импульсами в многокультурной среде, и только в IX веке, под влиянием арабской грамматической традиции, изучение языка иврит получает научное оформление.

Основными задачами исследования являются.

а) Представление истории еврейского грамматического учения в общем контексте еврейской филологии, а также в плане воздействия внешней традиции, в частности, в контексте арабского языкознания,

б) Выявление общностей между экзегетическими и грамматическими исследованиями путем включения исходных материалов и обобщения полученных результатов,

в) На основе изучения лингвистического метаязыка определение степени самостоятельности и научно-исследовательской продуктивности еврейской грамматики.

Структура диссертации. Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы и источников.

В введении рассматриваются основные вопросы и методологические подходы исследования, дается краткий обзор использованной литературы.

В первой главе - "Межкультурные отношения в еврейской среде в I-IX вв." описываются социолингвистическая ситуация в рассматриваемый период, а также вопросы, связанные с взаимодействием языков и формированием лингвистического метаязыка в контексте арабо-еврейского сосуществования.

Арабский язык был мощным инструментом в межкультурных отношениях и, следовательно, помимо языкового влияния, все аспекты культурного взаимодействия, такие как юридические, социально-экономические, религиозные и научные, широко обсуждаются в работе. Особое внимание уделяется литературным и философским контактам, в значительной степени представленным в текстах на еврейско-арабском языке и в более поздних переводах этих трактатов.

Во второй главе, озаглавленной «Формирование еврейского грамматического учения. Масора и экзегетика», представляются первые дограмматические попытки изучения библейского языка в рамках масоретских грамматических заметок. В этой части связь между изучением языка и толкованием раскрывается с помощью анализа толкований Священного писания. Делается попытка восстановления недостающего звена между ранней стадией изучения языка и сформированной грамматической теорией. Комментарии средневекового грамматика Авраама ибн Эзры на книгу "Исход" являются важным источником для анализа такого рода в связи с многочисленными примерами грамматических правил.

В третьей главе («Влияние арабской лингвистической традиции на еврейскую грамматику. Йона ибн Джанах») изложены основные направления развития грамматической теории, а также развития терминологической системы под влиянием арабской грамматики и концептуальные положения выдающегося грамматиста XI века Йона ибн Джанаха, представленные в его книге «Сефер Арикма» («Китаб аль-Лума'»).

В заключении диссертации обобщены и изложены основные результаты работы.

ALVINA POGHOS HOVHANNISYAN
THE FORMATION AND DEVELOPMENT OF HEBREW
GRAMMATICAL THOUGHT IN 9-13 CENTURIES IN THE CONTEXT OF
ARAB-JEWISH INTERACTIONS

Dissertation for the degree of candidate of philological sciences,
specialty 10.02.06 - "Ancient and Modern Languages of Asia"

The defense of the thesis will be held at 15:00, 25th of May 2015, at the session of the Specialized Council on Linguistics 019 HAC (Higher Attestation Commission) in the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences, RA (address: 0015 Yerevan, 15 G. Lusavorich St.).

SUMMARY

The dissertation is dedicated to the formation and development of Hebrew grammatical science in the context of Arab Jewish interactions in 9th - 13th centuries.

The history of Hebrew grammar is an interesting material to study as a long, almost ten centuries break is observed between the first steps to study of the Holy book and the formation of grammatical theories.

The first attempts to describe the Hebrew language were undertaken within the exegetical literature that dates back to the 2nd century BCE, and the process of Scripture reading and transmission was accompanied with the accumulation of linguistic data. These inner linguistic factors incorporate with the multi-cultural environment and therefore only in 9th century under the influence of the Arabic grammatical thought, the attempts to study Hebrew language got scientific formulations.

The main objectives of the research are.

- a) To present the history of Hebrew grammatical thought in the context of Jewish philology as well as foreign tradition, in particular in the context of the Arabic linguistics,
- b) To discover the commonalities between the exegetical and grammatical studies by including the source materials and summarizing the obtained results.
- c) To define the degree of autonomy and research productivity of Hebrew grammar through the study of linguistic metalanguage.

The structure of the dissertation

The thesis consists of an introduction, three chapters, conclusion and reference and source literature list.

The introduction to the thesis describes the main issues, methodological basis of the study, explains the relevance to the topic, purpose and objectives of the research and a brief overview of reference literature.

The first chapter called "Intercultural relations in the Jewish milieu 1-9th cc." describes the sociolinguistic situation of the discussed period, the issues related to inter-language exchanges and the formation of linguistic metalanguage which are widely presented in the context of Arab-Jewish coexistence.

Arabic language was a powerful tool for intercultural exchanges and therefore besides the linguistic influence, all aspects of cultural interactions, such as legal, socio economical, religious and scientific are widely discussed. Special attention is given to the literary and philosophical encounters largely presented in the correspondent texts in Judeo-Arabic and later translations of those tractates.

The second chapter, entitled "The formation of Hebrew grammatical theory. Masora and Exegesis" presents the first pre-grammatical attempts to study the Biblical language in the framework of Masoretic grammatical notes. In this part the connection between the language study and the exegesis is revealed with the reference to the literary commentary of the text. It is attempted to restore the missing link between the early stage of language study and late grammatical theory. The commentaries of the medieval scholar Abraham ibn Ezra on Exodus are the source of analysis due to the numerous examples of grammatical rules.

The third chapter, "The influence Arab linguistic tradition on Hebrew grammar. Jonah ibn Janah" outlines the main directions of the grammatical theory development, represents the terminology system of Hebrew grammar influenced by the Arabic grammar, and the conceptual statements of 11th century outstanding grammarian Jonah Ibn Janah in his «Sefer Harikma» (Kitab al-Luma').

The results of the dissertation are summarized in the concluding statements.